



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 924
Մայիս 28, 1992

Մեծայարգ
Տիար Մայքրլ Դաքեսեան
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդի Ատենապետ
Հէյվըրհիլ.

Յարգելի Տիար Դաքեսեան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Մարտ 8, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին երեք անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Լիզ Տերտերեան
Տէյվիտ Դաիթեան
Վազգէն Կոստանեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի, Ծխական Խորհուրդի եւ յանձնախումբերու ընտրութիւնները պէտք է կատարուին երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 1361
Ապրիլ 23, 1993

Արժանաշնորհ
S. Սահակ Բհնյ. Բէյիշեան
Հովիւ Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Հայվըրթի.

Սիրելի Տէր Սահակ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 22, 1993 թուակիր Ամակը, որով կը տեղեկացուի թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Մարտ 28, 1993-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կը տրուի քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրուի նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Ալիսըն Պասմաճեան
Հերմէն Ծէննէթեան
Բաֆֆիք Բարալեան
Մոզէք Դաւիթեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը պէտք է ըլլայ երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ, ինչպէս նաեւ բոլոր ընտրութիւնները պէտք է կատարուին երկպատիկ ցանկերու վրայէն:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
 ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1742
 Ապրիլ 20, 1994

Արժանաշնորհ
 Տ. Սահակ Քհնյ. Քէյիշեան
 Հովի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
 Նախագահ Ծխական Խորհուրդի
 Հէյվըրհիլ.

Սիրելի Տէր Սահակ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 20, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուած 16, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի երեք անդամներ:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Սանտրա Տաշօ
 Ռիչըրտ Մագ Նիլ
 Էտկըր Մոսէսեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները եւ կը թելադրենք որ անմիջապէս կատարուին սրբագրութիւնները. Ծխական Խորհուրդի հաշուական տեղեկագիրը ամբողջական չէ: Ելեւմտական գումարները չեն համապատասխաներ Ծխական Ժողովին ներկայացուած գումարներուն: Էջ 11-ի հաշուական արձանագրութիւն ամբողջական չէ: Հաշուեքննիչ Յանձնախումբը չէ ստորագրած Ծխական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը: Հաշուեքննիչ Յանձնախումբը չէ յիշած իր քննած աղբիւրները (էջ 12): Որեւէ ընտրութիւն պէտք է կատարուի գաղտնի բուժարկութեամբ եւ երկապտիկ ցանկի մը վրայէն:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
 Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋԵՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

223B-3

Թի 2006
Մարտ 20, 1995

Արժանաշնորհ
S. Սահակ ԲՅԱԿ. ԲԷՅԻՉԵԱՆ
Հովի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Հէյվըրհիւ.

Սիրելի Տէր Սահակ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 16, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 22, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Զարթի Չիլինկիրեան**
- Էտուըրտ Տէր Պօղոսեան**
- Վիրճինիա Չօպանեան**
- Էտուըրտ Պասմաճեան**

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Տեղեկագիրը ցոյց կու տայ որ 1994 տարուան «Լուսն»-ի հաշույն համայնքդ պարտական է 645.00 (վեց հարիւր քառասունըհինգ) տոլար, եւ Ծխական Ժողովի ատենագրութիւնը չէ ստորագրուած օրուան Ատենապետին կողմէ: Բարի եղէք առաջին առիթով ստորագրուած ատենագրութիւն մը դրկել Առաջնորդարան:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցաճումէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունիւ

Խաչակ Ապ. Դարսասեան
ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՍԵԱՆ
Առաջնորդ